



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի երրորդ եռամսյակում (վերլուծություն)

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 55590 գործարք, որոնց քանակը 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 0.5 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 11.3 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13412 օտարման գործարքների 73.7 %-ը կազմել է առուվաճառքը, 25.9 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.9 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 40.2 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի երրորդ եռամսյակում, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 0.5 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ աճել 1.8 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.5 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի երրորդ եռամսյակում, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.1 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 2.7 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մմ մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երրորդ եռամսյակ 2013 թ.	Երրորդ եռամսյակ 2014 թ.	Երկրորդ եռամսյակ 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356300	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282400	282700	282700
Նոր Նորք	251100	252600	252500
Ավան	259300	260200	260200
Էրեբունի	249000	250900	250800
Շենգավիթ	255100	256400	256100
Դավթաշեն	274700	275200	275150
Աջափնյակ	248100	249600	249600
Մալաթիա-Սեբաստիա	241100	242400	242000
Նուբարաշեն	152300	156000	155600
<b>Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)</b>	<b>272500</b>	<b>273700</b>	<b>273600</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.04 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1187 բնակարան, որի քանակը, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, աճել է 6.8 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 5.3 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մմ մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)
--------	----------	-----------------------

		Երրորդ եռամսյակ 2013 թ.	Երրորդ եռամսյակ 2014 թ.	Երկրորդ եռամսյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	114900	116000	115900
	Ապարան	56600	57500	57450
	Թալին	64500	65850	65850
Արարատ	Արտաշատ	94800	96700	96300
	Սասիս	115000	115650	115400
	Վեդի	99800	100700	100600
	Արարատ	75100	75400	75400
Արմավիր	Վաղարշապատ	154100	154150	154150
	Արմավիր	121100	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99150	99200	99200
	Գավառ	59100	59800	59800
	Մարտունի	107600	107650	107650
	Վարդենիս	44500	44800	44800
	Ճամբարակ	28100	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սյիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55000	55000
	Տաշիր	47000	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20200	20200
	Արշակունի	155000	155100	155100
Կոտայք	Նոր Հաճն	128500	128600	128600
	Բյուրեղավան	108100	108150	108150
	Եղվարդ	109300	109400	109400
	Հրազդան	63800	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	85500	85500	85500
	Գյումրի	109300	109300	109300
Շիրակ	Արթիկ	66500	66700	66700
	Մարալիկ	40200	40700	40700
	Գորիս	121600	122300	122000
Սյունիք	Կապան	92100	92900	92500
	Միսիան	91100	91150	91150
	Մեղրի	80100	80900	80900
	Ագարակ	46200	46900	46900
	Քաջարան	94500	94650	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայոց ձոր	95000	95000	95000
Վայոց ձոր	Եղեգնաձոր	124400	125500	125500
	Զերմուկ	112000	112900	112900
	Դիլիջան	113100	113200	113150
Տավուշ	Իջևան	118200	118300	118300
	Բերդ	60100	60200	60200
	Նոյեմբերյան	49400	49900	49900
	Այրում	31600	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2014 թվականի երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մլ մակերեսի հաշվարկով,

շուկայական միջին գները, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 1275 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 355 գործարք, մարզերում՝ 920 գործարք: 2014 թվականի երրորդ եռամսյակում, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 4.4 %-ով, ընդ որում, Երևանում՝ 2.7 %-ով, մարզերում՝ 5.0 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.6 %-ով, ընդ որում, Երևանում՝ 10.1 %-ով, իսկ մարզերում՝ 5.1 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մմ և տնամերձի 400.0 մմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մմ մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երրորդ եռամսյակ 2013 թ.	Երրորդ եռամսյակ 2014 թ.	Երկրորդ եռամսյակ 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239750	239700
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150800	150700
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	<b>286600</b>	<b>286700</b>	<b>286700</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մմ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մմ և տնամերձի 1000.0 մմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մմ մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երրորդ եռամսյակ 2013 թ.	Երրորդ եռամսյակ 2014 թ.	Երկրորդ եռամսյակ 2014 թ.

Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60000	60050	60050
	Թալին	69200	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96000	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Այվերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100000	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90000	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	131200	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000
	Իջևան	123100	123200	123200
	Բերդ	60000	60100	60100
	Նոյեմբերյան	48200	48300	48300
	Այրում	36200	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մլ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 4189 միավոր (1956.03 հա) հող, որից Երևանում՝ 339 միավոր (31.02 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2207 միավոր (1761.96 հա), որից Երևանում՝ 15 միավոր (5.15 հա),

բնակելի կառուցապատման հողեր՝ 1307 միավոր (114.39 հա), որից Երևանում՝ 161 միավոր (13.56 հա),

հասարակական կառուցապատման հողեր՝ 483 միավոր (38.41 հա), որից Երևանում՝ 156 միավոր (11.25 հա),

արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 51 միավոր (13.25 հա), որից Երևանում՝ 7 միավոր (1.07 հա),

առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 26 միավոր (20.83 հա),

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 114 միավոր (6.19 հա),

անտառային հողեր՝ 1 միավոր (1.00 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի երրորդ եռամսյակում օտարված հողերից 3475 միավորի (1725.85 հա) նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 283 միավոր (20.46 հա), նվիրատվության գործարքներ՝ 696 միավոր (228.18 հա), որից Երևանում՝ 53 միավոր (10.39 հա) և փոխանակության գործարքներ՝ 18 միավոր (2.00 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.17 հա):

Հանրապետությունում 2014 թվականի երրորդ եռամսյակում 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.3 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 11.0 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 1.6 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 26.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 401.48 հա, որից 396.69 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.3 %-ը կամ 878 միավորը (301.37 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 115 միավոր (6.14 հա), իսկ 74.0 %-ը կամ 2570 միավորը (1419.81 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 167 միավոր (14.32 հա): 2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 27 գործարք (4.67 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2014 թվականի երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող															
	Գյուղատնտեսական նշանակության հողեր				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողեր				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր			
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)						
Երևան	0	0.00	4	0.27	49	2.61	62	3.25	12	4.29	3	0.80	81	4.22	71	5.01								
Արագածոտն	24	29.01	1	0.01	3	0.56	18	3.19	156	128.04	0	0.00	92	9.64	7	0.37								
Արարատ	23	49.70	2	1.01	40	1.50	23	0.49	224	84.30	2	0.09	131	11.20	9	0.36								
Արմավիր	12	16.96	1	0.03	8	0.67	17	0.79	230	297.30	1	0.03	147	14.80	11	1.48								
Գեղարքունիք	7	11.63	5	7.24	13	1.06	32	2.48	63	52.21	5	0.34	30	3.28	3	0.92								
Լոռի	1	0.85	2	0.24	20	1.06	11	0.42	441	395.85	1	0.07	25	2.85	7	0.14								

Կոտայք	73	83.43	2	0.25	89	5.61	43	1.39	227	175.35	0	0.00	225	20.14	31	6.89
Շիրակ	1	0.46	1	0.50	11	0.10	6	0.09	120	112.87	2	0.02	29	2.92	7	0.13
Սյունիք	10	40.07	3	0.72	6	0.59	7	1.18	33	37.98	0	0.00	21	2.35	4	0.13
Վայոց ձոր	42	15.86	1	0.26	4	0.22	3	0.10	46	14.41	1	0.01	7	0.87	5	0.10
Տավուշ	17	4.83	8	1.07	23	1.40	30	1.69	30	9.17	2	0.02	17	1.39	6	1.27
Ընդամենը	210	252.80	30	11.60	266	15.38	252	15.07	1582	1311.77	17	1.38	805	73.66	161	16.80

Ստորև ներկայացվում է 2014 թվականի երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէկոլոգիականների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	70	1.90	4	0.27	31	0.97	35	0.66	45	4.23	0	0.00	0	0.00	18	1.64	27	2.59
Արագածոտն	2	0.20	0	0.00	0	0.00	2	0.20	40	31.13	20	27.57	1	0.01	3	0.56	16	2.99
Արարատ	4	1.02	1	1.00	1	0.01	2	0.01	82	51.42	21	49.44	1	0.01	39	1.49	21	0.48
Արմավիր	10	0.46	0	0.00	2	0.07	8	0.39	28	18.00	12	16.96	1	0.03	6	0.61	9	0.40
Գեղարքունիք	12	5.82	3	5.13	4	0.35	5	0.34	41	8.64	3	3.68	2	2.11	9	0.71	27	2.14
Լոռի	3	0.012	0	0.00	2	0.01	1	0.002	31	2.56	1	0.85	2	0.24	18	1.05	10	0.42
Կոտայք	9	0.53	0	0.00	7	0.51	2	0.02	198	90.15	73	83.43	2	0.25	82	5.10	41	1.37
Շիրակ	8	0.07	0	0.00	6	0.05	2	0.02	11	1.07	1	0.46	1	0.50	5	0.05	4	0.06
Սյունիք	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	25	42.54	10	40.07	3	0.72	5	0.57	7	1.18
Վայոց ձոր	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	49	16.44	42	15.86	1	0.26	4	0.22	2	0.10
Տավուշ	11	0.31	2	0.05	4	0.06	5	0.20	67	8.68	17	4.83	6	1.02	19	1.34	25	1.49
Ընդամենը	131	10.34	10	6.45	58	2.04	63	1.85	617	274.86	200	243.15	20	5.15	208	13.34	189	13.22

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 10 գործարք (9.65 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014 թվականի երրորդ եռամսյակում, 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 21.5 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 26.2 %-ով, իսկ մարզերում աճել է 27.9 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 78.6 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 31.6 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 13.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 4.8 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2014 թվականի երրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով			Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ		
	Միավորների	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)	Միավորների	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	8	15.22	53.5	400.1	155.7	93	37.54	365.0	12000.0	3694.1
Ապարան						4	4.08	86.5	2727.3	683.3
Թալին	12	12.35	90.2	223.9	142.2	32	32.11	93.6	5494.5	735.8
Ծաղկահովիտ						25	52.24	79.5	1000.0	312.6
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ						114	33.89	335.1	10833.3	2574.4
Մասիս	8	20.15	59.8	247.8	136.2	45	21.23	200.0	11904.8	2947.8
Վեդի	13	29.30	114.2	565.0	320.1	59	28.04	207.0	10795.1	1818.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	3	1.50	60.4	66.7	63.6	100	85.02	294.3	9090.0	1218.9
Բաղրամյան	8	11.50	70.8	315.4	193.2	36	154.93	90.6	2561.1	825.5
Վաղարշապատ	1	3.96	63.3	63.3	63.3	74	46.16	444.4	11764.7	2016.1
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						4	2.06	199.8	1875.0	433.4
Ճամբարակ	1	0.90	862.5	862.5	862.5			60.5	953.3	355.2
Մարտունի						20	5.68	51.1	2850.0	771.7
Սևան	2	2.79	172.5	187.5	180.0	14	10.78	52.2	2134.8	328.5
Վարդենիս						19	31.33	41.2	2575.1	406.6
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						11	4.20	170.4	6424.2	595.5
Գուգարք						67	17.75	234.6	6065.9	814.4
Սպիտակ						13	6.20	250.0	5555.5	707.0
Ստեփանավան	1	0.85	409.6	409.6	409.6	19	13.63	90.6	1686.6	343.7
Տաշիր						325	348.28	45.3	1384.4	180.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	29	30.42	63.9	14736.8	1276.5	99	49.51	279.3	11942.7	4067.9
Եղվարդ	31	40.52	74.4	1477.8	486.3	96	106.84	174.4	11971.8	2435.2
Հրազդան	13	12.49	92.0	954.4	452.6	23	13.93	130.5	10256.4	1311.3
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	1	0.46	1724.8	1724.8	1724.8	44	30.25	252.0	1693.1	620.9
Ամասիա						4	11.35	40.9	261.0	130.0
Անի						43	48.95	110.6	546.9	418.4
Աշոցք						4	4.65	58.5	215.8	134.2
Արթիկ						21	9.01	79.4	1428.6	461.2
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						9	10.61	92.6	1023.2	746.7
Կապան						3	1.02	120.0	841.6	381.7
Մեղրի	9	39.07	77.0	616.0	236.0	1	0.11	193.0	3000.0	748.3
Սիսիան	1	1.00	150.0	150.0	150.0	20	26.24	46.3	1977.4	564.3
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	31	10.60	47.3	700.0	236.6	24	9.47	125.0	10000.0	1881.1
Վայք	11	5.27	69.2	75.8	72.4	21	4.77	58.8	1430.7	636.6
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						6	1.21	213.3	3783.8	700.0
Իջևան	11	2.70	154.0	2400.0	1856.8	13	3.77	267.5	9454.5	1300.0
Նոյեմբերյան	6	2.14	192.7	2301.2	1470.6	11	4.19	46.7	7368.4	945.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի երրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների



վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մմ)	պայմանագրային գներ՝ 1000.0 մմ մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մմ)	շուկայական գներ՝ 1000.0 մմ մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						67	60954.4	130.7	22200.0	2583.1
Ապարան						11	11796.0	124.1	609.6	391.1
Թային	3	5569.0	52.5	712.8	272.6	9	16018.0	63.2	1454.8	152.8
Ծաղկահովիտ						3	6326.0	60.0	214.3	93.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	4	3859.6	533.9	3833.3	1654.6	42	41212.8	173.9	7140.3	905.0
Մասիս	30	9431.5	667.3	7860.0	2492.0	66	46835.0	187.5	25000.0	1232.9
Վեդի	5	1605.3	176.0	2941.2	1566.8	23	23947.0	126.1	5000.0	665.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	2	4063.0	359.7	2200.0	1279.9	35	37612.2	131.6	9090.9	1216.2
Բաղրամյան	2	1770.0	233.1	233.5	233.3	4	7973.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	236.0	2041.7	2047.5	2044.6	99	90370.0	197.4	26528.4	1533.6
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	1	378.0	193.1	193.1	193.1	1	1700.0	186.6	1084.3	684.3
Ճամբարակ	1	2496.6	84.5	84.5	84.5	1	408.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	5	3176.0	113.4	394.6	214.4	14	11474.8	119.3	5000.0	290.0
Սևան	1	507.0	372.6	372.6	372.6	8	9697.0	240.0	3110.4	326.7
Վարդենիս	1	536.7	66.7	66.7	66.7	6	9569.0	72.5	987.2	150.1
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	11	9920.0	234.1	1650.0	952.0	5	6800.0	114.3	1388.9	217.4
Գուգարք	7	571.2	2009.7	3528.3	2391.6	10	10557.3	77.9	14083.3	1264.7
Սպիտակ						3	3901.0	104.9	1348.3	207.6
Ստեփանավան						7	7264.4	88.2	1666.7	175.6
Տաշիր								45.3	400.0	90.0
<b>Վոտայքի մարզ</b>										
Աբովյան	74	46139.8	641.0	6297.3	3217.8	125	101742.7	264.5	35353.5	2061.5
Եղվարդ	7	4259.6	2488.2	4588.4	3091.8	85	77546.8	173.6	27000.0	2888.3
Հրազդան	1	600.0	2105.4	2105.4	2105.4	14	21353.0	117.7	34848.5	1323.1
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	5	525.2	2024.7	5723.6	4846.3	18	14139.5	113.6	18750.0	336.2
Ամասիա						1	1460.0	45.3	274.7	72.0
Անի						4	9698.6	67.9	180.6	183.7
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						3	2710.0	111.8	5000.0	218.3
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						9	10507.0	112.2	1700.0	369.9
Կապան	4	5554.7	105.6	120.0	112.8	4	1860.0	67.9	2638.9	324.5
Մեղրի	1	175.4	107.2	107.2	107.2	5	1950.0	68.5	632.9	230.5
Սիսիան						3	9183.0	123.5	875.0	225.0
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	3	1874.1	246.3	246.7	246.5	6	6390.1	96.7	7659.6	511.0
Վայք	1	348.7	852.2	852.2	852.2	1	2260.0	120.7	1448.3	239.5
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ	1	135.5	1107.0	1107.0	1107.0	1	1006.0	75.8	810.0	121.5
Իջևան	17	13200.7	73.2	3000.0	1558.1	14	10471.4	74.1	14423.1	556.2

Նոյեմբերյան	1	81.8	268.9	268.9	268.9	2	2465.4	125.0	1948.1	234.7
-------------	---	------	-------	-------	-------	---	--------	-------	--------	-------

2014 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2010 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.6 %-ը:

2014 թվականի երրորդ եռամսյակում, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 0.4 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, նվազել 4.2 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 165 բնակարանի, 281 անհատական բնակելի տան, 821 հասարակական նշանակության, 171 արտադրական նշանակության օբյեկտի, 549 միավոր (1680.04 հա) հողի, 19 ավտոտնակի և 4 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 11 վարձակալության գործարքների քանակը, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 56.0 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 57.7 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1680.04 հա հողերից 16.48 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1663.56 հա հողերից 1494.96 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 16.33 հա արդյունաբերական օբյեկտների, 121.97 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 490.18 հա, որից 486.48 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6333 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.4 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 5.0 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ աճել 0.5 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.8 %), անհատական բնակելի տների (23.7 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.2 %) և հողերի (7.9 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3552 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 5.1 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 5.0 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 1004.72 հա հող, որից 15.23 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 91.3 %-ը կամ 917.51 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.24 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արագածոտնի մարզում՝ 378.50 հա, որից 377.17 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 453 գործարք, որից 288-ը՝ Երևանում: 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 26.2 %-ով, ընդ որում Երևանում՝ 28.7 %-ով, մարզերում՝ 21.4 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել է 18.1 %-ով, ընդ որում Երևանում՝ 27.5 %-ով, մարզերում՝ աճել 5.8 %-ով:

2014 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 5854 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 1.0 %-ով, իսկ 2013 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 14.4 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.5 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (23.2 %):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**